Ակցիայի պայմանները

1. Ակցիայի ժամկետը՝ 18.12.2023թ.-ից մինչև 31.01.2024թ. ներառյալ
2. Ակցիայի ընթացքում Բանկի Visa թվային քարտով սուպերմարկետներում, մարկետներում և մթերային խանութներում գործարք իրականացնելու դեպքում Դուք կստանաք 5% հետվճար (այսուհետ՝ Cashback), բայց ոչ ավել քան 10,000 դրամ կամ համարժեք արտարժույթ յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում:

   ՀՀ տարածքից դուրս կատարվող գործարքների դեպքում ՀՀ դրամով հաշվարկ իրականացնելու համար հիմք է ընդունվում գործարքի իրականացման ամսվա վերջին օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքը: Իսկ հետվճարի գումարը քարտի արժույթին վերածվում է Բանկի կողմից վերադարձի օրվա դրությամբ հայտարարված անկանխիկ վաճառքի փոխարժեքով:
3. Մեկ գործարքի դիմաց հաշվարկվող Cashback-ի առավելագույն գումարը կազմում է 10,000 դրամ կամ համարժեք արտարժույթ:
4. Յուրաքանչյուր հաշվետու ամսվա ընթացքում անկանխիկ գործարքներ իրականացրած հաճախորդներին գումարի հետվճարները փոխանցվում է հաշվետու ամիսը հաջորդող ամսվա մինչև 8-րդ աշխատանքային օրը: Տվյալ հաշվետու ամսվա չհաշվեգրված գործարքների դիմաց հետվճարները ենթակա են վճարման հաջորդ ամսվա գործարքների հետ միասին՝ բացառությամբ Ակցիայի վերջին ամսվա գործարքներից:

Ուշադրություն!

1. Cashback չի տրամադրվի այն գործարքների դիմաց, որոնք չեղարկվել են:
2. Cashback չի տրամադրվի, եթե քարտը/քարտերը, որոնցով կատարված գործարքները, cashback-ի տրամադրման պահին փակված են:
3. Տվյալ ակցիայի շրջանակներում cashback-ի գումարը փոխանցվում է միայն ակցիայի մասնակցի Visa քարտին, այսինքն՝ այն չի հանձնվում երրորդ անձին:
4. Ակցիային չեն կարող մասնակցել.

- Բանկի աշխատակիցները,
- Բանկի «սև ցուցակ»-ում գտնվող քարտապանները,
- Բանկի հանդեպ ժամկետանց վարկ ունեցող քարտապանները,
- Բանկի անվտանգության ստուգումը չանցած քարտապանները:

Բանկի կողմից հայտարարված ակցիայի իրականացումը կարող է հետաձգվել անորոշ ժամկետով, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության արդյունք և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով սույն Ակցիայի իրականացման հետաձգման վերաբերյալ Բանկը ողջամիտ ժամկետում Բանկի պաշտոնական ինտերնետ կայքի միջոցով տեղյակ է պահում հաճախորդներին: